«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝	«Ավետիք Իսահակյանի սիրային նամակները՝ սիրային քնարերգության հենք»
ԱՌԱՐԿԱ՝	«Հայ գրականություն»
ՀԵՂԻՆԱԿ՝	Մելինե Թանդիլյան
ՄԱՐԶ՝	Լոռի
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝	Ալավերդու Սայաթ-Նովայի անվան թիվ 8 ավագ դպրոց
ՂԵԿԱՎԱՐ՝	Գ. Էմինյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ---------- 3

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ՍԻՐԱՅԻՆ ՆԱՄԱԿՆԵՐԸ՝ ՍԻՐԱՅԻՆ ՔՆԱՐԵՐԳՈՒԹՅԱՆ ՀԵՆՔ ---------- 4

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ---------- 13

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ ---------- 14

ՀԱՎԵԼՎԱԾ 1 ---------- 15

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Արդիականությունը՝ ընտրված թեմայի արդիականությունը պայմանավորված է նրանով, որ այս աշխատանքով ներկայացրել ենք մեծանուն բանաստեղծ Ավետիք Իսահակյանի սիրո քնարերգությունը նամակների ուղեկցությամբ: Սիրային նամակները Իսահակյանի բանաստեղծությունների հիմքն են հանդիսանում: Նամակների միջոցով է, որ մենք տեղեկանում ենք բանաստեղծի մեծ սիրո մասին:

Սույն աշխատանքում ներկայացրել ենք ականավոր բանաստեղծ Ավետիք Իսահակյանի սիրային նամակները, որոնք նրա սիրային քնարերգության հենքն են: Մեծ գրողի կյանքն ու ստեղծագործական ուղին ուսումնասիրելիս կարևոր է առաջին հերթին կարդալ նրա նամակները, քանի որ նամակներից պարզ է դառնում նրա ներաշխարհը, հոգեվիճակը: Նամակներն ընթերցողին տանում են բանաստեղծի զգացմունքների աշխարհը, մի աշխարհ, որը նրա ստեղծագործության աղբյուրն է: Նրա նամակները բացահայտում են պոետի սիրո երազների, լիրիկական հերոսի «տանջված սրտի», «երգի ու վերքի» պատճառը: Բանաստեղծի այդ նամակները սիրո առլեցուն գործեր են՝ «Դարդս լացեք» «Սիրեցի, յարս տարան» և շատ ուրիշ բանաստեղծություններ, որոնցում պոետն անկաշկանդ արտահայտել է սիրո սրով խոցված իր վիրավոր սրտի երգն ու վերքը:

Հետազոտական աշխատանքի նպատակը՝ ներկայացնել բանաստեղծի սիրային քնարերգությունը նամակների միջոցով, որոնցում արտահայտված են բանաստեղծի հուզական ներաշխարհը, ապրումները, հոգեվիճակը:

Հետազոտական աշխատանքի խնդիրները՝ աշխատանքի նպատակին հասնելու համար մեր առջև դրել ենք հետևյալ խնդիրները.

- ներկայացնել հեղինակի այն նամակները, որոնք սիրային քնարերգության հենքն են
- ներկայացնել սիրային քնարերգության պատառիկներ, որոնք սիրո զգացողության և ապրումների ծնունդ են
- բացահայտել բանաստեղծի հոգեկան երկվության պատճառները

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ՍԻՐԱՅԻՆ ՆԱՄԱԿՆԵՐԸ՝ ՍԻՐԱՅԻՆ ՔՆԱՐԵՐԳՈՒԹՅԱՆ ՀԵՆՔ

Մեծանուն բանաստեղծի՝ Ավետիք Իսահակյանի կյանքի պատմությունը համարվում է գրողների կյանքի պատումների շարքում ամենահետաքրքրականներից մեկը: Բանաստեղծի ստեղծագործությունը յուրահատուկ կամուրջ է հայ գրականության դասական և նորագույն շրջանների միջև: Խոսելով բանաստեղծի ստեղծագործությունների մասին՝ պետք է ուշադրություն դարձնել նրա նամակագրական ժառանգությանը:

Յուրաքանչյուր գրողի նամակագրական ժառանգությունը նրա թողած գրական աշխարհի ինքնատիպ էջերից է: Քնարական, խոհափիլիսոփայական ներաշխարհ ունեցող բանաստեղծի՝Ավետիք Իսահակյանի նամակները իրենց մեջ ներառում են այն հույզերն ու ապրումները, հոգեվիճակներն ու զգացմունքները, որոնք նա արտահայտել է իր բանաստեղծություններում:

Բանաստեղծությունը քնարական ստեղծագործություն է, որտեղ բանաստեղծի հույզերն են, տարբեր տրամադրություններով պայմանավորված հոգեվիճակը. այդ իսկ պատճառով երբեմն բանաստեղծությունը դժվար ընկալելի է: Այդ առումով նամակները օգնում են հասկանալու բանաստեղծական պատկերի ներաշխարհը, այսինքն՝ բանաստեղծի հուզական աշխարհը: Ավետիք Իսահակյանի նամակների մեծ մասը հասցեագրված է սրտամոտ մարդկանց, որոնց առջև նա բացել է իր սրտի և հոգու դարպասները, պատմել և խոստովանել սրտի ու մտքի գաղտնիքները: Իսահակյանը մի առիթով ասել է. «Ես մտածելով չեմ գրել նամակներս, այլ գրիչս գրում է անզուսպ, չափած-ձևված բաներ գրելու սովորություն չունիմ»: [1;11]

1891 թվականի ապրիլին Իսահակյանը վերադառնում է Ալեքսանդրապոլ, երկար ժամանակ մնում հայրենի քաղաքում, և հենց հայրենի Ալեքսանդրապոլում էլ ծագում է մեծ սիրո առաջին զգացումը իր հեռավոր ազգականուհու՝ Շուշանիկ Մատակյանի նկատմամբ: Սիրո առաջին հորձանքը քնարական բանաստեղծությունների աննախադեպ ալիք է առաջ բերում: Շուշիկի մոգական պատկերով ողողված՝ գրվում են մեկը մյուսին գերազանցող սիրային մարգարիտներ: [4;113]

1891 թվականին Իսահակյանը որոշում է վերադառնալ Էջմիածին և ուսումը շարունակել:

Բանաստեղծը և Շուշանիկ Մատակյանը խոստանում են միմյանց նամակներ գրել: Պետք է նշել այն հանգամանքը, որ նամակագրությունը մեծ տարածում և հեղինակություն էր վայելում: Բազում գրական հրաշալիքներ ստեղծվել են հենց նամակի ժանրով: Նամակին ենք պարտական նաև մեծ մարդկանց կյանքի շատ մանրամասներ, անհայտ էջեր ու դրվագներ իմանալու համար: Իսահակյանի մեծ սիրո մասին մենք տեղեկանում ենք նամակներից, որոնք գրել են միմյանց Շուշանիկը և Իսահակյանը: Սիրո մեծ զգացումը,Իսահակյանի ողջ ներաշխարհը բացահայտվում են հենց գրված նամակներում:

Բանաստեղծի նամակներում, որոնք ուղղված են եղել իր սիրելի էակներին, թաքնված են եղել նրա սիրտն ու հոգին. ի՞նչն է բանաստեղծին մտահոգել, ի՞նչ է փոթորկել նրա հոգին: Իսահակյանի նամակները խոստովանություններ են, տառապող ու սիրող հոգու խոստովանություններ: [1;9]

1891-1893 թվականներին Իսահակյանի և Շուշանիկ Մատակյանի միջև կանոնավոր նամակագրություն է հաստատվում: Սիրո զգացմունքը փոխադարձ էր. բավական է ընթերցել 1891 թվականի նամակները, որոնք հանդիսանում են սիրո զգացմունքների վկայություն: Ռոմանտիկ խառնվածքի տեր բանաստեղծը՝ Իսահակյանը, իր հոգում կերտել էր Շուշիկի իդեալականացված կերպարը և աստվածացնում էր նրան:

Շուշիկը իշխում էր թե՛ նրա մարդկային ապրումներում, թե՛ նրա բազում ստեղծագործություններում: Ստորև ներկայացված է 1891 թվականին Շուշիկից ստացած մի նամակ , որը նա գրել է «Հիշատակարանում»:

«Այսօր ստացա օր. Շ-ից երկրորդ նամակը.....որքա~ն ուրախացա, ես այժմ երջանիկ եմ, որ կարողացա գտնել «մեկը» նման իմ հոգուն, իմ բնավորությանը: «Նրա» մեջ տեսնում եմ իմ հոգեկան պատկերը՝ որոշ գույներով.ես «նրան» սիրում եմ իդեալական սիրո ամենաընդարձակ ծավալով. «նրան»սիրում եմ.... անվերջ, հավիտյան...Կյանքը թվում է ինձ անվերջ սեր... Ա՛խ մեր սերը դեռևս չենք հայտնել միմյանց, բայց անշուշտ, հավատացած եմ. որ «Նա» էլ ինձ է սիրում, ամբողջ նամակից փոխադարձ սեր է ծորում...»: [4;115]

Այդ զգացողություններից ու ապրումներից ծնվել են հոգեպարար տողեր.

Կուզե՞ս լինիմ ծառ ու ծաղիկ՝
Քեզ գրկումս նինջ սփռեմ.
Թալուկ սրվեր, թռվիչ թռչնիկ,
Օրոր ասեմ, օրորեմ:
Ինչ որ ցանկաս՝ կուզե՞ս լինիմ,
Լինիմ երկինք ու երկիր,
Լինիմ ծով, ժայռ, արև, լուսին,
Միա՛յն, միա՛յն ինձ սիրի՛ր…

Իսահակյանի և Շուշանիկ Մատակյանի միմյանց հանդեպ ունեցած մեծ սերը գեղեցիկ ավարտ չի ունենում. Շուշանիկը մոր հորդորով ամուսնանում է ուրիշի հետ: Այս մեծ ցավը և թախիծը անվերջ տանջում են բանաստեղծին՝ նրա կյանքը դառնությամբ լցնելով:

1904 թվականին գրված նամակը,որն ուղղված էր Շուշանիկ Մատակյանին, ընթերցելիս արդեն իսկ պարզ է դառնում, որ Շուշանիկ Մատակյանը արդեն ամուսնացել է:

«Ինչու՞ եմ գրում, ինչն է ստիպում ինձ գրել.-սիրել-ես քեզ չեմ սիրում, ատել -ես քեզ չեմ ատում. բայց դու իմ հոգում կաս՝ որպես մի ծանր երազ, որպես մի դժբախտություն, մի կոշմար. ես ուզում եմ քեզ հոշոտել, ես ուզում եմ քեզ հազար-հազար անգամ սպանել, սպանել, նորից սպանել, կենդանացնել՝ նորից սպանել.հավիտյան ապրել, և քեզ հավիտյան սպանել, բայց այդ չեմ կարող անել.անզոր եմ. ամբողջ էությունս բարի է»:

Թերևս նման մի պահի են ծնվել այս տողերը.

Սիրեցի, յարս փարան,
Յարա փվին ու փարան:
— էս ի՞նչ զուլում աշխարհ է,
Սիրտս պոկեցին, փարան:

Նախորդ նամակներում Իսահակյանը գրում էր աշխարհի երեսին գտնվող լավագույն զգացմունքի՝ սիրո մասին: Այն սիրո, որի միջոցով նա մոռանում էր ամեն ինչ,

այն սիրո ,որին նա աստվածացրել էր: Իսկ ահա այս նամակում ամեն ինչ փոխվում է. տառապանք և խոր հիասթափություն, որոնք էլ ստիպում են բանաստեղծին նամակում գրել այս տողերը.

«Դու ասում էիր ինձ, որ ինձ չես սիրել-գիտե՛մ, գիտե՛մ. բայց այդ քեզ իրավունք չի տալիս ինձ, երբ ես քու ոտքերի տակ տիեզերական սիրուցս ստորացած ընկած էի, ծաղրելու, արհամարհելու, դուրս շպրտելու. չէ՛ որ, Շուշիկ ջան, ես մարդ էի. չէ՛որ,կային օրեր, որ դու ինձ հարգում էիր, «թանկագին» և «ջան» խոսքերով խաղում էիր հետս... Բայց լալիս եմ հիմա, և սրտիցս արյուն է կաթում. գնա՛, Շուշիկ, Աստված քեզ հետ, ապրի՛ր քու երեխաների համար. Ինձ մի՛ անիծիր. Իմ անունս երբեք, երբեք մի՛ հիշիր և ոչ մի տեղ»: [4;62]

Նամակն ավարտվում է հետևյալ տողերով.

Աղաչում եմ քեզ...
Ես էլ կվարվեմ քեզ հետ այդպես:
Դու ինձ համար Մեռա~ր, մեռա~ր...
Արտասվելով համբուրում եմ քու գերեզմանը
Եվ ճամփա ընկնում
Նոր Աստված գտնելու...

Շուշանիկը, որին նա նախկինում աստվածացնում էր, այլևս նրա համար գոյություն չուներ. նա թաղել էր իր սերը, տառապանքից կարծես կուրացել.

Տիեզերքի պերճ հյուսվածքն եմ,
Իմ մեջ երկինքն է երգում,
Բռնկում է սիրո հրդեհն,
Վշտի հեղեղն աղմկում...

Հոգեկան երկվությունը ծանր է ու ճնշող, մի կողմից մաքրամաքուր սեր՝ տրորված ու արհամարհված սիրելիից, մյուս կողմից՝ վիրավորված ու անարգված ինքնասիրություն, սրբապղծված մաքրություն, խաբված երազ, ցնորված պատրանք...Որքան ուժ է պետք՝ լռեցնելու հոգու ճիչը, սիրո պոռթկումը, երկար սպասված վայրկյանի զգացողությունը, սիրելիին փարվելու անհագ ցանկությունը... Բանաստեղծի հոգին ցավի ու անհագ

վայելումի բախման մրրկածուփ ալիքներում է լողում, ուր հոգին այնքան անզոր է սիրո մրրիկը լռեցնելու համար.[2;3]

Եվ սիրո մասին խոսում ենք նույնպես,
Բայց խիստ անտարբեր ձևանում եմ ես,
Վրադ չեմ նայում , չեմ լսում ստեպ,
Որպես թե անհույզ, սառն եմ քո հանդեպ:
Բայց հալվում եմ ես սիրուց բոցակեզ,
Ուզում եմ գրկել ու համբուրել քեզ.
Հազիվ զսպում եմ մրրիկը սրտիս,
Ախ, սակայն հոգիս բերանս է գալիս...

Որքան էլ ծանր լիներ Իսահակյանի համար,սակայն նա հարկ է համարել «Հիշատակարանում» տալ այս սիրո տխուր պատմության, ինչպես և Շուշիկի դավաճանության իր մեկնաբանությունը. «Երբ ես դեռ պատանի, երբ բնությունը նոր սեր ցոլաց իմ մեջ, երբ նոր աղջնակի սերը իմ կյանքում արձագանք տվեց-ես սիրեցի Շուշիկին-ես սիրեցի նրան՝ինչպես իմ մայրիկին, ինչպես գեղեցկությունը, ինչպես հայրենիքիս կապույտ լեռները-իմ ողջ էությունը երգի ու երազի թելերով հյուսեցի նրա սիրելի էության հետ...բայց նա ինձ մոռացավ. Ինձ իմ երազներով ձգեց իր ոտքերի տակ և բարձրացավ ուրիշի ուսերի վրա»:

Իսահակյանի գրած հետագա նամակներից պարզ է դառնում, որ մերժում ստանալով Շուշանիկ Մատակյանից՝ տարիներ հետո սիրահարվում է Աննա Մատակյանին, ով Շուշանիկ Մատակյանի քույրն էր: Իսահակյանը դեռևս չէր մոռացել իր նախկին սիրուն՝ Շուշանիկին, բայց կարծես թե նա էլ վարվում էր Շուշանիկի պես: Գուցեև փորձել է Աննայի միջոցով մոռանալ նախկին սիրելիին, գուցե որոշել է վրեժխնդիր լինել Շուշանիկից իրեն պատճառած տառապանքների համար: Աննային գրված նամակները բացում են բանաստեղծի հոգու դռները: Նամակը ընթերցելիս գտնում ենք և՛ անսահման սեր, և՛ անձնազոհ նվիրում, և՛ կարոտ, և՛ հեռուներից եկող ցավի մորմոք: [2;4] Այդ տողերում զգացվում է սիրո մեծ ուժը, սիրո հզոր պոռթկումը: Թե ի՞նչ էր կատարվում բանաստեղծի հոգում, նրա ներաշխարհում,իսկապես դժվար է իմանալ. արդյոք հաջողվել է նրան իր ամբողջ զգացմունքները տալ թղթին, նամակի մեջ գրել այն ամենը, ինչ կատարվում էր իր հոգում, ինչ կար իր սրտում և մտքում:

Ահա թե ինչ էր գրված Աննա Մատակյանին ուղղված նամակում.

«Ո՞վ ես դու. իմ պահապան հրեշտակը, թե կործանող սատանան»… «ինչպես կուզենայի, որ դու լինեիր ջինջ ու լազուր երկինք իմ հոգու, իմ մռայլ ծովի վրա փռված փայլուն, պայծառ երկինք»:

«Դու հարցնում ես՝ վիշտը սրտիդ մեջ սնուցանելով՝ վճռիր իմ տատանմունքս… Ես միայն այս կասեմ քեզ և այս միայն մի անգամ կասեմ և ամբողջ կյանքիս մեջ միայն մի անգամ կասեմ քեզ-Ես սիրում եմ քեզ, Աննիկ, Աննիկ ջան, իմ շա՜տ սիրելի Աննիկ…»:

Աննայի փխրուն, եթերային հոգին այն եզերքն էր, որտեղ բանաստեղծը կարող էր մեղմել հոգու ցավը և խոստովանել. «Ես սրբության պես կմոտենամ քո հոգու տաճարին, կերկրպագեմ և կյանքս, կյանքս չեմ խնայի – լինես դու պայծառ արշալույս, մաքուր, խորն ու վսեմ …»:

1905 թվականին գրված նամակը ևս գրված է սիրո լի զգացումով: Սակայն բանաստեղծը ամբողջովին չի կարողանում գրել իր զգացմունքների մասին:

«Չգիտեմ՝ ինչ եմ գրում, բայց սրտիցս արյուն է գնում, և սիրտս մարում է. Ինչու՞ ամենաուժեղ կերպով չհավատանք իրար. ինչու՞ հավատի անսահման, կապույտ, անամպ ու ջինջ երկինքը չլինի մեր մեջ…», ապա՝

«Էհ, վերջացնեմ նամակս. Զգում եմ, որ սիրտս չեմ կարող բանալ, արտահայտել.հնար լինի դնեի այս նամակի մեջ և ղրկեի քեզ, և՛ տեսնեիր, և՛ լայիր, և՛ հավատայիր, և՛ սիրեիր… Զգում եմ, որ քեզանից չեմ կարող զրկվել…Վերք կա իմ մեջ, խո՛ր, լայնաբերա՛ն, և էլի չի գոցվում նա, և էլի արյունս ծորում է, թափվում է.դու չես տեսնում դա, չես զգում..բայց կարող ես, չես ուզում բուժել, գուրգուրել ինձ….» :[5;66]

Քո՝ Ավետիք

Սրտի վիրավոր զգացումները, լուսավոր պատրանքները, երազանքներն ու հույզերը, բազմազան տրամադրություններն ու պատկերները հավաքվում, ձուլվում են իրար՝ դառնալով մեծ կյանքի պատմություն՝ հավերժող ցավերով ու հույզերով…, հավերժող լույսով ու գեղեցկություններով:

Իսահակյանի քնարական բանաստեղծությունների ներքին թրթիռները բացահայտվում են նամակներում արտահայտված հոգեվիճակների և մտորումների օգնությամբ: Նամակները կօգնեն ընթերցողին հայտնաբերելու բանաստեղծի կյանքի ու հոգու առեղծվածների աշխարհը, որից էլ ծնվում է նրա բանաստեղծությունը:

Նամակները կօգնեն թափանցելու գրողի ներաշխարհը, հոգու գաղտնարանները, երազների եզերքը, որովհետև նամակները խոսում են բանաստեղծի անձնական ներաշխարհի ներքին թրթիռների մասին:

Իսահակյանի քնարերգությունը ժողովրդային է իր ոգով ու ոճով, բովանդակությամբ ու գեղարվեստական առանձնահատկություններով՝ ձևով: Իսահակյանի քնարերգությունը երգի, երաժշտության նման անմիջական է ու վարակիչ, այն թափանցում է ընթերցողի հոգու խորքը, առաջ բերում քնքուշ թախծի, սիրո ու կարոտի զգացումներ: Իզուր չէ, որ բանաստեղծը իր ստեղծագործությունն անվանել է «Երգեր ու վերքեր». դրանք երգերի նման հուզիչ են և վերքերի նման ցավոտ, մրմուռ պատճառող:

Բանաստեղծն իր երգերն ու վերքերը հյուսել է՝ իրեն տանջող զգացմունքները՝սերը, կարոտը, վիշտը արտահայտելու համար:Քնարական բանաստեղծություններից շատերը նամակներից են ծնվել:

Շուշանիկին, հետագայում նաև Աննային գրած սիրային նամակներից հետո գրվել են բազում բանաստեղծություններ,որոնց հիմնական թեման եղել է սերը: Երբեմն սիրո գեղեցիկ զգացմունքն է արտահայտվել բանաստեղծություններում, երբեմն՝ տառապանքը, դավաճանված լինելու զգացմունքն ու սիրված էակի կողմից արհամարհանքը…Ահա այդ ամենն իրենց արտացոլումն են գտել բանաստեղծի նամականիում և հետո՝ բանաստեղծություններում.

Բարև կուտամ, չես առնի,
Ոտքիդ կոխած հողն եմ, յար.
Սիրտս անխիղճ մի՛ ճմլի,
Չէ՞ որ միջին դուն ես, յար:

Իսահակյանի համար սերը կյանքն է ՝իր բովանդակ գեղեցկությամբ, իր բոլոր հմայքներով ու հրապույրներով. «Սերն է բնության և կյանքի արարիչը»: Ահա թե ինչու սիրո խորտակումը նրա համար հավասարազոր էր տիեզերական վթարի: Բնությունը կորցնում է իր հրապույրը, կյանքը՝ իր իմաստը:

Վառ աստղերը երկնքից ընկան,

Վարդ ու շուշան թառամեց,

Ա~խ, իմ կյանքս, անուշ կյանքս

Կտոր,կտոր փշրվեց:

Սիրո մեծ բանաստեղծն անհուն մորմոքով է երգում տիեզերքի զարմանահրաշ գաղտնիքների, աստղերի անհունության մասին՝ պահանջելով վերադարձնել սիրո կյանքը, որ իր ցաված հոգին հարություն առնի..., իր սրտի բաբախը ներդաշնակվի տիեզերական բաբախին... Սրտի վիրավոր զգացումները, լուսավոր պատրանքները, երազանքներն ու հույզերը, բազմազան տրամադրություններն ու պատկերները հավաքվում, ձուլվում են իրար՝ դառնալով մեծ կյանքի պատմություն՝ հավերժող ցավերով ու հույզերով..., հավերժող լույսով ու գեղեցկություններով: Իսահակյանի՝ քնարական բազմախորհուրդ ելևէջումներով հյուսված բանաստեղծությունների ներքին թրթիռները բացահայտվում են նամակներում արտահայտված հոգեվիճակների և մտորումների օգնությամբ: [2;7]

Նամակներից երևում է, որ նա իր սիրելիներին աստվածացնում էր: Շուշանիկ և Աննա Մատակյաններից բացի, նա բազմաթիվ նամակներ է գրել նաև Վիկտորյա Աբովյանին: Դրանից մեկում կան այսպիսի տողեր. «Ես անբախտ մարդ դուրս եկա, սակայն պիտի գիտենանք, որ քաջ եմ և միևնույն ժամանակ շատ բարի ու խղճմտանքի տեր»:

Շուշանիկ Մատակյանի հանդեպ տածած սերն այդպես էլ անավարտ մնաց: Իսահակյանը հետագայում ամուսնանում է Սոֆյա Իսահակյանի հետ: Պահպանվել են նաև կնոջ հետ եղած նամակագրությունները: Բայց այդ նամակները տարբերվում են Շուշանիկ և Աննա Մատակյաններին գրված նամակներից:

Իսահակյանի նամականին օգնում է ճանաչել նրա մարդկային կերպարը, աշխարհայացքն ու աշխարհընկալումը, բանաստեղծի փոխհարաբերությունների շրջանակը, բացահայտել այն սկզբունքները, որոնցով նա առաջնորդվում է մարդկային հարաբերություններում շատ արժեքներ գնահատելիս: Գրողի նամակներն օգնում են գնահատելու նրա ստեղծագործության մի շարք կողմերը, գտնելու նրա պոեզիան սնող տրամադրությունները, ծանոթանալու նրա կենսագրական էջերին. ահա ինչու դրանք ուսումնասիրելը կարևոր է. դրանց միջոցով կարողանում ենք ընկալել բանաստեղծի հոգեվիճակները, դրանք տեսնել բանաստեղծությունների մեջ:

Իսահակյանի կարծիքով, սերն է ամեն ինչի սկիզբն ու հիմքը, մտքի շարժման հիմնական ակունքը, որով էլ մարդկությունն առաջնորդվում է հոգևոր-մշակութային արժեքներ ստեղծելիս: Ահա այսպիսին է բանաստեղծի սիրային քնարերգությունը, որի հենքն են նրա սիրային նամակները:

Եզրակացություն

Ուսումնասիրելով Իսահակյանի քնարերգությունը սիրային նամակների ուղեկցությամբ՝ եկանք հետևյալ եզրակցության.

1. Բանաստեղծի նամակները, ինչպես և յուրաքանչյուր գրողի նամակագրական ժառանգությունը, օգնում են ավելի մոտիկից ծանոթանալ գրողին, ճանաչել նրա ներաշխարհը, և այն տեսնել բանաստեղծությունների մեջ:
2. Իսահակյանի նամակների միջոցով ծանոթանում ենք նրա հետաքրքիր և բազմաշերտ ներաշխարհին:
3. Նամակները, որոնք ուղղված են իր սիրելի մարդկանց,անկեղծ են և լիովին արտահայտում են բանաստեղծի սերն իր բոլոր դրսևորումներով:
4. Իսահակյանի նամակները սիրո խոստովանություններ են: Քնարերգու բանաստեղծն իր ստեղծագործություններում լիովին չէր կարող ներկայացնել իր սիրո պատմությունը. նամակներն ամբողջովին իր ապրած երջանիկ սիրո և նրա պատճառած տառապանքի վկայությունն են:
5. Նամակներում բանաստեղծը բացում է իր հոգու դարպասները, պատմում ու խոստովանում իր սրտի ու մտքի գաղտնիքները, որոնք օգնում են ընթերցողին ճանաչել նրա մարդկային կերպարը, բացահայտել այն սկզբունքները, որոնցով նա առաջնորդվել է կյանքում՝ մարդկային փոխհարաբերություններում:
6. Ավետիք Իսահակյանը նամակներ է գրել մոտ 70 տարի՝ 1889-1957 թթ.: Նամակներում, որոնք ուղղված են եղել իր սիրելի էակներին,բանաստեղծը սերն անվանել է«բնության և կյանքի արարիչ>>,նրա խորտակումը՝«տիեզերական վթար»:
7. Նամակներն օգնում են ընթերցողին թափանցել բանաստեղծի առեղծվածային, բարդ ներաշխարհը, ընկալելի, հասկանալի են դարձնում նրա սիրային քնարերգությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ավետիսյան Ա., Ավետիք Իսահակյանի նամակները, Երևան, 2016, 474 էջ
2. Արզումանյան Ա., Բանաստեղծի նամականին, ուսուցման առանձնահատկությունները, 100 էջ
3. Իսահակյան Ա., Ավետիք Իսահակյան Գիտական կենսագրություն, Երևան, 2000, 601 էջ
4. Իսահակյան Ա., Երկերի ժողովածու, հատոր 1, Երևան, 1973, 385 էջ
5. Իսահակյան Ա., Երկերի ժողովածու, հատոր 6, Երևան, 1979, 395 էջ
6. Իսահակյան Ա., Երկեր, Երևան, «Սովետական գրող» հրատ.,1987, 888 էջ

Հավելված 1

(Նկար 1)

Ավետիք Իսահակյան

(Նկար 2)

Շուշանիկ Մատակյան

(Նկար 3)

Սոֆյա Իսահակյան՝ Ավ. Իսահակյանի կինը

(Նկար 4)

Ավետիք Իսահակյանի ընտանիքը